

«Հաստատում եմ»

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարանի

ռեկտորի ԺՊ՝ Ե. Ս. Սերոբյան



27 նոյեմբերի 2020 թ.

Կ Ա Ր Ծ Ի Ք

Ա Ռ Ա Ջ Ա Տ Ա Ր Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Թ Յ Ա Ն

Անժելա Իսրայելի Մինասյանի «Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրերի դասավանդման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում» թեմայով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ՝ ներկայացված մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար դասիչ ԺԳ.00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (մաթեմատիկա) մասնագիտությամբ:

Վերջին տասնամյակների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող արմատական սոցիալ-տնտեսական փոփոխությունները անմիջական ազդեցություն ունեն բարձրագույն՝ հատկապես մանկավարժական, մասնագիտական կրթության վրա: Էապես բարեփոխվել են «Մանկավարժություն և՝ մեթոդիկա» կրթական ծրագրի և՝ չափորոշիչները, և՝ ուսումնական պլանները, և՝ առարկայական ծրագրերը: Դրանցում էական նորամուծություն է ստոխաստիկայի (հավանականությունների տեսություն, միացությունների տեսություն (կոմբինատորիկա)) ներառումը առարկայական ծրագրեր:

Գաղտնիք չէ, որ ստոխաստիկական մտածողությունը ընդհանուր գիտական մտածողության կարևոր բաղադրիչ է: Բայց դպրոցականի կամ ընդհանրապես անհատի ստոխաստիկական մտածողությունը (գոնե՝ պարզագույն մակարդակով) պետք է ձևավորի տարրական դպրոցի ապագա ուսուցիչը, ով, բնականաբար, պետք է օժտված լինի այդ մտածողությամբ: Այնուհետև հմուտ մասնագետ-մանկավարժների ջանքերի շնորհիվ պետք է տվյալ մտածողությունը զարգանա ողջ ուսումնառության ընթացքում:

Ներկայումս արդիական են դառնում մեր երկրի հանրակրթության «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառի չափորոշիչներում և ծրագրերում հավանականային-վիճակագրական նյութի բովանդակության ընդլայնման և հստակեցման, ներառարկայական և միջառարկայական կապերի հաշվառման միջոցով համապատասխան մաթեմատիկական դասընթացներում դրա ներդաշնակ

խնտեգուման, ստոխաստիկական խնդիրների համակարգի և ուսումնամեթոդական նյութերի մշակման հիմնախնդիրները:

Անժելա Իսրայելի Մինասյանի «Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրերի դասավանդման առանձնահատկությունները» թեկնածուական ատենախոսությունը նվիրված է վերոնշյալ հիմնախնդիրների արմատական ուսումնասիրությանը, ինչպես նաև հանրակրթական դպրոցներում հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրերի դասավանդման առանձնահատկությունների հիման վրա ՀՀ-ում կիրառելի մեթոդական համալիրի մշակմանը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և թվով 6 հավելվածներից:

Ատենախոսության առաջին գլխում շատ հանգամանալից ուսումնասիրվել և ներկայացված է հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության՝ որպես մաթեմատիկական գիտելիքների ոլորտի, ձևավորման և պատմական զարգացման փուլերը: Ներկայացված է հավանականային-վիճակագրական մեթոդների և գաղափարների դերն ու նշանակությունը բնագիտական և սոցիալ-տնտեսական մի շարք բնագավառներում: Կատարվել է նաև ստոխաստիկայի տարրերի ուսուցման և ստոխաստիկական նյութի ընկալման մի շարք հոգեբանամանկավարժական խնդիրների բազմակողմանի վերլուծություն:

Ատենախոսության երկրորդ գլխում առանձնացվում են հանրակրթական դպրոցում հավանականությունների տեսության և վիճակագրության տարրերի ուսուցման հիմնական նպատակները՝ որպես հանրակրթական դպրոցի մաթեմատիկայի ուսուցման ընդհանուր նպատակների անմիջական հետևանք: Ներկայացված է վերամշակված ծրագրային բովանդակություն: Առանձնացված է յուրաքանչյուր փուլում նյութի ուսուցման հիմնական նպատակները, այնուհետև սովորողների գիտելիքներին և կարողություններին ներկայացվող *չափորոշային նվազագույն պահանջները*: Առաջ է քաշվում նաև առանձնացված մեթոդների կիրառության նպատակահարմարության հարցը՝ կապված աշակերտների տարիքային առանձնահատկությունների հետ: Ներկայացվում է առաջարկվող բովանդակության առանձին թեմաների ուսուցման մեթոդները և մեթոդական ցուցումներ: Յուրաքանչյուր թեմայի ուսուցման շրջանակներում առաջարկվում են ներառարկայական և միջառարկայական կապեր իրականացնող, կիրառական նշանակություն ունեցող հետաքրքրաշարժ խնդիրներ:

Կատարված է թվով երեք հետազոտություն՝ արդյունավետության մակարդակի, հետաքրքրության ցուցանիշի և տարիքային առանձնահատկությունների համապատասխանության առումով:

Ատենախոսության եզրակացությունում ամփոփված են ատենախոսությունում ստացված կարևորագույն արդյունքները:

Ներկայացված ատենախոսությունը շարադրված է գրավիչ ու լավ ոճով և ունի ուշադրության արժանի բազմաթիվ ուժեղ կողմեր: Մատնանշենք դրանցից մի քանիսը.

Ատենախոսության հիմնական դրական կողմերից մեկն անշուշտ ստոխաստիկական մտածողության զարգացման անհրաժեշտության շեշտադրումն է,

երկրորդը՝ տարբեր երկրների դպրոցական դասընթացում դրա ներդրվածության ուսումնասիրությունն է,

երրորդը՝ հայկական ծրագրերում այս թեմայի ոչ համակարգված բնույթի վերլուծությունն է և նրա հիմնական ծրագրերում ներգրավվածության կազմակերպված, նպատակային բնույթի մատնանշումն է, ինչպես նաև միացությունների տեսության և հավանականության ու վիճակագրության տարրերի միասնական պատկերացումների ձևավորման անհրաժեշտությունն է:

Ատենախոսության վերաբերյալ կան հետևյալ դիտողություն-ցանկությունները.

1. Հիմնականում տեսակետների առաջադրումը և ուսումնասիրությունները հենված են այլ հեղինակների աշխատանքների համաձայնեցման վրա: Հստակ առանձնացված չէ սեփական տեսակետները այլոց տեսակետներից:
2. Խնդիրները դիտարկելիս հստակ առանձնացված չէ կրթական աստիճանները, այն առանձնացնելու համար կարիք կա հետադարձ անդրադարձ կատարել նախորդ գլխին:
3. Որոշ թիրախային թեմաներ, ինչպիսիք են օրինակ «Մեծ թվերի օրենքը» սահմանափակված է զուտ տեսական ներկայացմամբ: Ցանկալի էր օրինակի միջոցով հեղինակը ցույց տար, թե ինչպես է տեսնում տվյալ թեմայի ուսուցումը ավագ դպրոցում:
4. Կարծում ենք ավելի նպատակահարմար կլիներ հավելված 3,4,5 բովանդակությունը տեսանելի լիներ բուն աշխատանքում, քանի որ հենց այնտեղ է արտացոլված ատենախոսության նպատակներն ու ձեռքբերումները:
5. Ցանկալի էր աշխատանքում տեսնել ոչ միայն վերլուծություն տարիքային տարբեր փուլերում, այլ նաև համակարգված ծրագրային, ինչու չէ նաև բովանդակային սխեմատիկ բարեփոխումների ծրագիր: Գիտամեթոդական տեսանկյունից շատ արժեքավոր կլիներ, եթե ներկայացված լիներ թե ինչի՞ հաշվին պետք է առաջարկվող բովանդակությունը մտնի դպրոցական ծրագրեր, ինչպես նաև կատարվեր նյութի ուսուցման ծրագրային բաշխում:


Սակայն պետք է նշել, որ այս դիտողություններ-ցանկությունները չեն ազդում այն գնահատականի վրա, որին արժանի է աշխատանքն ընդհանրապես: Ատենախոսությունում ստացված արդյունքները շոշափելի են և միանգամայն նոր:

Եզրակացություն - նկատի ունենալով, որ Անժելա Իսրայելի Մինապյանի ատենախոսական աշխատանքը ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, կատարված է պատշաճ գիտական մակարդակով, ունի տեսական ու գործնական

նշանակություն և հիմնականում բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի (ԺԳ.00.02 դասիչով- «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (մաթեմատիկա) մասնագիտությամբ) գիտական աստիճանի հայցման համար ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին, ուստի միջնորդում ենք Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գործող գիտական աստիճաններ շնորհող 020 մասնագիտական խորհրդի առջև, որպեսզի ատենախոսության հեղինակին շնորհվի մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի 2020 թվականի նոյեմբերի 20 - ի թիվ 3 նիստում:

Քննարկմանը մասնակցել են՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Վ. Ֆ. Մանուկյանը, ամբիոնի պատվավոր վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Հ. Սարգսյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Ս. Սողոյանը, ֆիզմաթ գիտությունների թեկնածու դոցենտ Մ. Մուրաֆյանը, մանկ. գիտությունների թեկնածու, դոցենտ Ն. Հարությունյանը, ֆիզմաթ գիտությունների թեկնածուներ՝ Գ. Հայրապետյանը, Ա. Աթոյանը, Ս. Վարդանյանը, ասիստենտներ՝ Պ. Նահապետյանը և Ա. Սարուխանյանը:

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ԺՊ, ֆ.մ.գ.թ., դոցենտ՝  Վ. Ֆ. Մանուկյան

Ամբիոնի վարիչի ստորագրությունը հաստատում են՝  Վ. Պետրոսյան
ՇՈՀ-ի գիտքարտուղար՝